ԳՐԱԿԱՆ

ԳԻՐՔ ԴԻՒՑԱԶՆԵՐԳՈՒԹԵԱՆՑ

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

Յուզումով է որ հրատարակութեան կու տանք հատուած մը Կոստան Զարեանի «Գիրք Դիւցազներգութեանց» անտիպ հատորէն: Զարեան արդի հայ գրականութեան տիտաններէն է, և իր «Գիրք»ը կը պարունակէ այն ամէնը ինչ որ գեղեցիկ և բացառիկ էր բազմատաղանդ քերթողին մօտ: Իր կարապի երգը այս մէկը, ուր հապճեպի հովը ամբողջ գիրքին կու տայ անկոփ, կիսաւարտ, բարբարոս գեղեցկութիւն մը: Ինք իսկ արդէն, «Առաջաերգ»ին մէջ տագնապանքով կը խոստովանի.

«Ճամբիս ծայրին եմ: Վերջին հրաժեշտս
Նշան է անում ապրած օրերին»:

«Գիրք Դիւցազներգութեանց»ը ապահովաբար լրումը պիտի ըլլար քերթողի ստեղծագործական կարողութիւններուն, վերջին հիանալի վերաբռնկումը Զարեանի տաղանդին, անոր՝ որ մեր գրականութեան ընծայած էր «Օրերի պսակը» և «Տատրագոմի հարս»ը, «Նաւը լերան վրայ» վէպն ու տակաւին այլ երկեր:

Սակայն, «չվերանայուած» ըլլալու իր հանգամանքովը հանդերձ, «Գիրք Դիւցազներգութեանց»ը երևոյթ մըն է արդի հայ գրականութեան մէջ, արժանի այն տեղին ու ճանաչումին՝ զոր անշուշտ իրեն պիտի ընծայեն մեծ քերթողին տաղանդն ու արուեստը: Ամբողջ գործը կը բաղկանայ աւելի քան երեք հարիւր մեքենագրուած մեծադիր էջերէ, և փառաբանութիւն մըն է Հայ ցեղի առաքինութիւններուն և Հայաստանի արիւնաներկ հողին ու հիանալի բնութեան: Զարեանը յատկանշող ջղուտ ոճը և հայ լեռներուն ապառաժեայ կարծրութիւնը ունեցող լեզուն արտակարգ գեղեցկութեան կը հասնին հոս, ուր նրբագոյն և արուեստով լի փոխաբերութիւններն ու ժողովրդական միամիտ ասացուածքները իրարու հետ սերտ միութիւն մը կը ստեղծեն, ամբողջ գործը կեանքով և յոյզերով թրթռացնելով: «Վահագն», «Ասացուած ցուլամարտ Մհերի համար», «Հայկ դիւցազն», «Հատուած Տիգրան Մեծի թուելեաց երգից» քանի մը խորագիրներ են գիրքը կազմող բանաստեղծական պատմումներէն, որոնք մեր պատմութեան սկզբնական շրջանը առած իբրև հող-հիմ՝ կը կառուցանեն այն հիանալին որ Հայ ժողովուրդ կը կոչուի, իր նկարագրի լոյս ու մութ գիծերով, հայրենի հողի իր անմարելի կիրքով, իր ապրումներով և կեանքով:

Ստորև ներկայացուածը հատուած մըն է «Գիրք Դիւցազներգութեանց»ի մուտքէն, զոր բանաստեղծը «Առաջաերգ» վերնագրած է:

ԽՄԲ.

digitised by A.R.A.R.@

1

Հոգու խորհուրդը թաղուած է լոյսի՝
Լոյսի խաւարի շերտերի տակը:

Ինձ միտք մի տանջեց. ո՞վ պիտի քաղի
Դարերի ետև թագնուած կրակը
Կորած աստղերի, որոնց շողքերով,
Կապտաւուն և մով,
Հիւսուել է փարթամ կեանքը մեր ցեղի
Եւ գծուել ճամբան անդուլ դէպքերի:

Երբ ես, մոլորուած մէջս մաքառող
Ստուերներում յուշի, բարձրացայ մի բլուր
Եւ բլրան վրայից շուրջս դիտեցի -
Ինձ շրջապատեց մոգութեամբ փռուած
Աշխարհ մի անանց:
Հայոց լեռների
Վիթխարի շարքը պայծառ լոյսերով
Արձանագրուեց այս երկրագնդի
Մեծդի քարտէսում և հոգիս լցուեց
Տարակուսանքով: Ինչպէ՞ս ես պիտի
Լսեմ արիւնիս հոսուն կարկաչին
Եւ վերագտնեմ մարուած դարերի
Մրրիկով կերտուած վէպը մեր սրտի
Եւ երգը հզօր, որ դեռ հնչում է
Մոլորակների շրջապարերում
Եւ մեր ձորերի վայող գիշերում:

2

Քայլերս մտան սէգ մեր օրերի
Ստուերներով կամար կապած քարայրը:
Յոյզիս մրճերով կոփուած արձանը
Վեր թռաւ, կանգնեց
Եւ իր աչքերի վստահ բոցերը
Ման եկան հեռուի փլուած ամպերում
Եւ բացին դուռը լռութիւնների:

Մարդը ի՞նչ է որ, եթէ անդադար չի փոխանակւում
Աւելի հարուստ հոգու գանձի դէմ -
Եթէ իր ձայնի սարսուռը արծաթ

digitised by A.R.A.R.@

Չի նետում ծովի շառաչին առատ -
Եթէ իր ձեռքի բարդ աշտանակի եօթնաջահերը
Չի յանձնում ցաւին որոնումների
Եւ տարրալուծուող ժամերի միջից
Չի քաղում մտքի վառ խոյանքները:

3

Ճամբիս ծայրին եմ: Վերջին հրաժեշտս
Նշան է անում ապրած օրերին:
Հարաւից հիւսիս տարածուող բացը
Թևը բախում է հորիզոններին:
Անծայրածիրը հրդեհով լցուած իր բազուկները
Կրծքին է սեղմել
Եւ իր սահմանը ծածկուել է վշտի շնչահեղձ մութով:
Օ, սիրտ անհանգիստ, թող փայլակների կերպացումները,
Պաշտամունքային նշանակները,
Մոխրագոյն քարէ սկահակները,
Սեպաձև փորուած յուշարձանները,
Խաչը, սուաստիկան, ցանքի ծիլերը,
Հացահատիկի դեղին բոցերը,
Տատրակի երգը, աստղերի պարը,
Իմ ութը մատով և երկու բոյթով
Բերանը կապեն սանդարամետի
Եւ վերադարձիս քայլերի առջև
Բանան երկաթէ դուռը երազի:

Թաղենք ցորեկը հազար մետաղով
Ձայնող գիշերուայ ծածնուած խորհրդում
Եւ առաջանանք:
Բագինի առջև
Մի աբլոր մորթենք: Քղամիդը նետենք
Մեր մերկ ուսերին և մեր ճակատը
Վարազի գրոհով ցցենք երկնքին:

Ահ, իմ սրտումս ուզում եմ սեղմել
Համայն կերպերի սերմաբջիջը:
Ուզում եմ խփել մոգութեան կնիքը
Կեանքի բաց կրծքին. ուզում եմ լինել
Ամբողջականի հրավառուած թևը:

digitised by A.R.A.R.@

Մահը վստահ է:
Ամէն մի հերոս
Իջնում է վիհը
Եւ հանդիպում է ուրուականներին:
Իր յուզումների եռացող գինին
Նա բաժանում է և սկիհը ձեռքի
Նետում անյայտին: Ապա քայլում է
Մրրիկով ծեծուած մտքի վայրերում
Եւ մաքառում է՝
Բախելով սրտի հուժկու վահանը
Խաւարում շաչող պղինձ թուրերին -
Որպէսզի բացուի թագնուած սահմանը
Եւ վերածնուի տագնապող հոգին:

Իջնում եմ վիհը:

4

Ինձ բոլորում է նախ խոր մթութիւն:
Առաջանում եմ նեղ ճամբէքներով,
Չեմ կարող յիշել ինչքան ժամանակ:
Եւ, յանկարծ -ի՛նչ հրաշք- երազի եզրից
Կամաց բացւում է մի վեհ տեսարան:

Մեծդի մի տաճար. զարդարուն, հարուստ
Եւ պատկերակերպ:
Բացուած սեղաններ:
Նրանց շուրջը շարուած ճոխ բարձրագահեր,
Որոնց ծածկոցը՝ ոսկիով հիւսուած՝
Անօթների հետ բոցավառում է,
Դահլիճը լցնում շող ակունքների
Պսպղանքներով և սպասների
Եւ սկիհների պերճ քանդակներով:

Արդեօք կոչո՞ւնք է: Յուզուած աչքերս
Շրջում են չորս կողմ, բայց մարդ չեմ տեսնում:
Ո՞ւր է կոչնատէր իշխանը խրոխտ
Կամ թագաւորը՝ տէր խրախութեան:
Ո՞ւր են պճնազգեստ նուիրակի ձայնով
Կոչուած հիւրերը, ո՞ւր են լուսափառ
Եւ հանդիսաւոր մեր տիկինները:

digitised by A.R.A.R.@

Լապտեր, կանթեղներ, բազմաստեղ փայլով,
Լոյսեր են սփռում շքեղ այս վայրում:
Գունավառում են անթիւ ծաղիկներ -
Ասպազան, յասմիկ, մեղրութ և նարգես,
Հորօտ և մորօտ, համասպրումն,
Որոնց բուրումն
Վեր է սլանում զգլխիչ և նուրբ:

Եւ մինչ զարմանքով նայում եմ լռիկ,
Մէկ էլ, երկարած դահլիճի խորքից,
Լսւում է զնգող փանդիռի մի ձայն:
Վազում եմ այն կողմ -օ՛, ժամ բախտաւոր-
Այնտեղ նստած են, մեծիլիս կազմած,
Մեր երգիչները, վիպասանները,
Գուսանները քաջ՝ ներշնչուած դէմքով,
Ջահուած աչքերով:
Նրանք՝ շրջապատուած
Մեր արկածների դարերից եկած
Վսեմ շուքերով՝ վերակոչում են
Վէպեր փառաւոր և առասպելներ,
Որոնց խորաշունչ արձագանքները,
Դեռ մինչև այսօր,
Լուռ սաւառնում են
Հայի ձեռքերով մշակուած դաշտերով,
Հայի խորհուրդը պահող ձորերով,
Երկնքին հասնող լեռների գլխին
Եւ սաղարթներում թաւ այգիների:

Ամէն մի պահը լցւում է յուշով
Անցած օրերի: Աչքերիս առջև
Անցնում են դանդաղ հերոսները մեր,
Մեծդի ստուերները հուժկու քաջերի,
Դից, աստուածների և՝ տիեզերք կերտող՝
Հնչուն քայլերը առասպելների:

Երգը թնդում է:
Կոչունքի սրահը
Լցւում է ծաւի, որդան կարմիրի
Վառվռուն գոյներով հագուած հիւրերով՝
Զրնգուն ու չխկուն զէնքերի ձայնով:

Ալ ալուան նախշուած մետաքսների մէջ
Փաթաթուած կանայք, աչքերով հրաշէջ,

digitised by A.R.A.R.@

Ժպտում են չորս կողմ և, շոյ ձեռքերով,
Ակնազարդ շարուած սկիհներ են լցնում
Շիրակայ բոցեղ, հրաշունչ գինիով
Եւ մատուցում են յուզուած հիւրերին:
Մինչ ես, երազկոտ, ծարաւ աչքերով,
Նայում եմ այդ հրաշք, մեծ տեսարանին -
Սարսռուն պսպղուն մի նուրբ արարած
Երկարում է ինձ բիւրեղէ մի սկիհ
Լցուած գինիով.- «Ըմպի՛ր արիւնը
Մեր այգիների, որպէսզի երգը
Լիութեան բերքը սրտիդ բաժանի
Եւ յոյսդ վառի հազար մոմերով
Ներշնչումների»:
Եւ երբ խմում եմ -
Դահլիճի խորքից
Յանկարծ հնչում է արծաթէ մի ձայն՝
Մէջս տառապում:

5

«Թող բամբ լարերը
Փանդիռի
Հնչեն և զնգան -
Լոյս դառնան,
Սլանան՝
Նուաճեն աստղերը:

Երգե՛նք ձիւնաթագ և բարձրասանդուղք
Մեր սեպ լեռները,
Մեր խոր ձորերը, ժայռերը խոժոռ,
Եւ ժայռերի տակ՝ փեշը վեր հանած,
Արծաթ չմուշկը քարերին զարնող,
Կանչող, բղաւող,
Թռչող գետերը:

Վիների նուագ:

Ով որ իր սրտի ճրագը վեր ցցած,
Չի անցել Հայոց աշխարհի վրայով -
Ինչպէ՞ս կարող է հոգու աչքերով
Կարդալ գաղտնակերտ այն նշանները,
Որոնց խորհուրդի ներքին կըրակը

digitised by A.R.A.R.@

Օծել է յամառ մեր ճակատները:

Ահա կանգնած է՝ վսեմ, լուսահագ՝
Հայոց աշխարհին տիրող Պարոնը -
Ազատը սրտով բիւրեղ և յստակ՝
Արարատ լեռը արևահաւաք:

Ուսերից կախուած ալ պատմուճանից
Ծալք ծալք երկինք է թափւում դէպի վար
Եւ իր գագաթի ձիւնակոփ թագից
Ճառագայթում է վեհութիւն անառ:

Մեր հոգու հիմքում բարձրացած կոթող,
Նա յուշ է, կանչ է կախարդ և դիւթող -
Նա քրմապետ է, լռութեան Մեծ Մոգ,
Աստղաշխարհի խուզարկու պահակ,
Ցաւերով սնուած Տիտան մտահոգ,
Յոյսի սերմացան,
Հայոց հէքեաթի մշտահոս մի ակ,
Հայ ժողովրդի անմեռ ջահատար՝
Բնութեան հանճար»:

Սրահում թնդում են ծափեր անհամար:
Կանանց և մարդկանց յուզուած սրտերում
Փարթամ և շքեղ պարտէզ է ծաղկում՝
Բոցկլտում հրավառ:

-- Կեցցէ՛, ջան գուսան, մատա՛ղ խօսքերիդ
Եւ հազար լարով հնչող քո սրտիդ:

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

Հատուած «Գիրք Դիւցազներգութեանց» անտիպ հատորէն

digitised by A.R.A.R.@